Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով տոներային քարտրիջների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05.11.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան
Աշ. Խաչատրյան
Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան
Բացակայում էր հանձնժողովի անդամ՝ Էդ. Հարությունյան

1. Հայտերի գնահատման և գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Գնման ընթացակարգի

1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ**-ի,

4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի **«ՉԻՊ» ՍՊԸ**-ի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«ՉԻՊ» ՍՊԸ**-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մասնակցի կողմից ներկայացված Հավելված N 1-ը թերի է լրացված, մասնավորապես լրացված չէ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ):

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 06.11.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 09.11.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 , դեմ-0:

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Կ. Բարսեղյան

---------- Ա. Խաչատրյան

---------- Աշ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ. Հակոբյան